Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Тимирязев Климент
Аркадьевич
Дарвинизм

9(47.925)
Д-15

1905

323(91·54)
Ջ-18
3(47·925)
Ջ-15
323.1
Ջ-18

Դ. ՉԱԼԽՈՒՇԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԹՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ԹԱՐԳ. Հ. ՏԷՐ—ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑԻ

Թաւրիզ

1905

3231
9-15
9(47.925)
9-15

ԳՐ. ՉԱԼԽԱՐԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

ԹԱՐԳ. Հ. ՏԷՐ—ԿԱՐԼԳԵՏԻՆԵԱՆԻ

Թաւրիզ

1905

ՍՏՈՒԳՎԱԾ Է
1905 թ.

16 JUL 2013

13981

Ռուսերէնը թոյլատրուած է ցենզորից։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZSSZ-Арм.ССР
Ա. Մ. Ա. Մայակովսկի
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

275-93

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ես հաւատացած եմ, որ Կովկասցիները հաւատարիմ հպատակներ են Թագաւոր Կայսրին, որի ներքին տեղական բոլոր ժողովուրդները հաւասարապէս մօտ են ու գնահատելի։

(Կովկասի փոխարքայի հեռագիրը 1905 թ. Մարտ 30-ին)։

I

Մի քիչ պատմութիւն եւ մի քիչ վիճակագրութիւն։

Հայերը գոհութեան զգացմունքով կարդացին Գեներալ-Լեյտենանտ Մալամայի պաշտօնական յայտարարութիւնը Կովկասի Փոխարքայ Գրաֆ Վորոնցով-Դաշկովի հեռագրի բնագրի հետ։ Առաւելապէս մեզ համար գնահատելի է այն, որ Գրաֆը իւր հեռագրում շեշտում է, թէ յուսով է մոցնել բարերար ոեֆորմները տեղական ազգաբնակութեան խելացի մեծամասնութեան աջակցութեամբ։„ Մինչև երեխան լաց չլինի, մայրը ծիծ չի տալ“ և մեծամասնութեան պարտականութիւնն է „լալ“ իւր կրած զրկանքների, վիրաւորանքների, անիրաւութիւնների, վերջապէս կորիքների համար,

որպէսզի Փոխարքան իմանայ թէ ինչ պատճառով, որի շնորհիւ խանգարուեց Կովկասի խաղաղութիւնը և ինչ ձևով կարելի է նորից վերականգնել կարգը։

Ա.հա թէ ինչու, մենք, հայերս, պարտաւոր ենք հէնց այժմ առանց քաշուելու, բաց, աղնիւ, անկեղծ կերպով ասել թէ ինչու, օրինակ, Կովկասը, ուրախութեան, ծիծաղի, բանաստեղծական այն գեղեցիկ երկիրը, յանկարծ մեզ համար դարձաւ տխրութեամբ, սգով, արտասուքով լի մի անհիւրընկալ երկիր։

Հայկական հարցը գոյութիւն ունէր միմիայն Տաճկաստանում, բայց մեր բիւրոկրատիան ճարպիկ միջոցներով, հակառակ հայերի կամքի և ցանկութեան, կարողացաւ ստեղծել և Ռուսաստանում։ Այս հարցը այժմ բոլորովին հասունացած է և նրան պէտք է վճռել։

Նորան վճռել կարելի է միայն մի ձևով՝ հեռացնելով բոլոր այն ազդակները, որոնք կեանք տուին հայոց հարցին։

Հայերի *հաւակրութիւնը*, ինչ էլ որ ասեն մեր չարակամները, միշտ եղել է Ռուսաստանի կողմը, որի վերայ է մնացել արևելքի քրիստոնեաների պաշտպանի անունը, սկսած Մեծն Պետրոսի (*) փառաւոր շրջանից։

(*) Զափաղանց հետաքրքիր է Մեծն Պետրոսի վերաբերմունքը դէպի հայերը։ Ռուսաստանի Մեծ բարեհորոգիչը հրաւիրելով հայերին Ռուսաստան, կարգադրում է. „ինչքան կարելի է փաղաքշել հայերին և ինչ բանի մէջ կարելի է թեթևութիւն տալ, դրանով եկողների աւելի մեծ թիւ գրաւելու համար“։ (полн. собр. Т. IV. 1711 г № 2330 им. ук. Сенату) 1724 թիւ Նոյեմբերի 10 ի Հրամանի մէջ, որը տրուած է

Դէպի հայերը ռուսների ունեցած համակրութեան համար վկայում է Ալէքսանդր 1-ի հրովարտակը (1813 թուի սեպտեմբեր 15-ից տուած Տեպլիցում), որի մէջ կան «սիրելի և հաւատարիմ Հայկեան ժողովրդին», "ճշմարիտ երախտագիտութիւն և բարեհաճութիւն» խօսքերը։ XVIII դարի վերջերից սկսած հայ զինուորների խմբերը կռուում են ռուսաց յաղթական զօրքերի շարքում կամ տաճիկների դէմ կամ պարսիկների։ Հայերի ծանօթ լինելը ճանապարհների, տեղական բնակիչների լեզուի, նոցա բարքերի հետ, և նոցա (հայերի) առատ հիւրընկալութիւնը քիչ չէին նպաստում ռուսաց զէնքի յաջողութեանը։ Ռուսաց և արտասահմանեան լրագիրների պատերազմի բեմ ուղարկած շատ թղթակիցներ և գրողները հիացմունքով էին նկարագրում այն ընդունելութիւնները, որ ցոյց էին տալիս տաճկահայերը, իրենց հոգևորականների առաջնորդութեամբ ռուսաց զօրքերին Կարսում, Երզրումում և ուրիշ տեղերում։ Այդ ընդունելութիւններն էին, որ ընդ միշտ յետ մղեցին տաճիկներին հայերից, դարձնելով նրանց մեզ անհաշտ թշնամիներ. և երբ ռուսները յետ դարձրին գրաւած վայրերը, պէտք եղաւ այդ ընդունելութեանց փոխարէն շատ թանգ

Գեներալ-Մայոր Կրոպոտովի անուամբ, Պետրոս Մեծը ասում է. „արա նրանց (հայերին) ամեն տեսակ օգնութիւն և պահիր նրանց ուժեղ պաշտպանութեամբ և այնպէս վարուիր, որ երբէք նրանցից ոչ մի գանգատ չլսուի, որովհետև մենք հայոց ազգը ընդունել ենք մեր կայսերական մասնաւոր ողորմածութեան և պաշտպանութեան տակ։ (собр. актовъ. отн. къ обозр. исторіи армянскаго народа ч. 1 ст. 165)։

Նոյնպէս միշտ բարեհաճ էր դէպի հայերը և Եկատերինա Մեծը։

վճարել-կրելով անընդհատ ստորացումներ, տանջանքներ, ամօթ, խայտառակութիւն և տալ անվերջ արիւնալի զոհեր...։ Եւ չնայելով այդ բոլորին, չնայելով նրան, որ բացի հայերից, սուլթանի բոլոր հպատակ ազգերը շահուեցին այդ պատերազմից, բայց մենք ոչ, (*) Ռուս անունը շնորհակալութեամբ և յուսով էր լիշւում այն բոլոր տեղերում, որտեղ կային հայեր և ռուս անուան մէջ մի ինչ որ շատ թանկագին և փառաւոր բան էր զգում մեր չարչարուած և տանջուած սիրտը. կարծես այդ անունը մեզ ծառայում էր իբր նշանաբան տաճկաց տիրապետութիւնից ազատուելու և եւրոպական քաղաքակրթութեան մասնակից լինելու։

Յետոյ եկաւ հայկական կոտորածը, որի սարսափները դեռ չափազանց թարմ են մեր լիշողութեան մէջ և պէտք չէ նրա մասին երկարօրէն խօսել։ Ամբողջ Եւրոպան ցնցուեց։ Տեղի ունեցան ազմկալի միտինգներ Անգլիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Իտալիայում՝ Կարմիր Սուլթանի դէմ։ Միայն Գերմանիան պաշտպանեց նրան, կոտորածի հառաչանքների աղմկի մէջ, նրանից կոնցեսիաներ, պատուէրներ և Պաղեստինում հողեր ստանալով։ Վիլհելմ կայսրը մինչև անգամ, ինչան իւր հաւանութեան ուղարկեց սուլթա-

(*) Ս. Սանֆանոյի 16-որդ և Բերլինի վեհաժողովի 61-որդ յօդուածները...։ Երանի էր, որ նրանք բոլորովին չլինէին, ինչքան նրանք մեզ տանջանք և արիւն արժեցան...։ քանի դեռ զոյութիւն կունենայ Բարձրագոյն Դուռը, զոյութիւն կունենայ և տիրահոչակ եւրոպական կոնցերտը. իսկ քանի դեռ զոյութիւն կունենայ այդ կոնցերտը՝ աւելի շուտ կաթիլ առ կաթիլ կթափուի վերջին հայի արիւնը, քան կլուծուի հայկական հարցը Տաճկաստանում։

նին իւր պատկերը։

Բոլոր հայերը, սրտի տրոփիւնով սպասում էին թէ ինչ կասի Ռուսաստանը։ Նրա մի խօսքիցն էր կախուած հարիւր հազարաւոր տանջուողների կեանքն ու մահը։ Խօսքը ասուեց, բայց ոչ յօգուտ հայերի։ Մեր դեսպան Նելիդովը, արտաքին գործերի մինիստր Լոբանով-Ռոստովսկու պահանջմամբ, (որը պնդում էր, թէ մեզ պէտք է Հայաստանը առանց հայերի), յայտնեց բոլոր դեսպաններին, որ Ռուսաստանը դէմ է բարեկամ Սուլթանի դէմ որև է բռնի միջոցներ ձեռնարկելու և եւրոպական կոնցերտը ցրուեց։

Ես քաղաքականութիւնից քիչ բան եմ հասկանում, գուցէ այդպէս էր պահանջում քաղաքականութեան իմաստութիւնը (չնայած բոլոր օգուտները տարաւ միայն Գերմանիան), բայց անհերքելի է, որ Ռուսաստանը յանկարծակի փոխեց իւր հին աւանդականութիւնը և առաջին անգամ երևան եկաւ ոչ որպէս արևելքի քրիստոնեաների պաշտպանի, այլ մի ծանր, պատասխանատու և իրեն ոչ յարմար մի դերում-Սուլթանի սուրը իրաւունքների պաշտպանի, քրիստոնէութեան թշնամու, հալածողի դերում։

Ես քաղաքականութիւնից քիչ բան եմ հասկանում, բայց ես գիտեմ, որ ներկայ դէպքում մեր արտաքին քաղաքականութիւնը առաջնորդւում էր ներքին քաղաքականութեամբ, որը խիստ փոխուել էր դէպի հայերը։

Այլևս խօսք չէր կարող լինել «ճշմարիտ երախտագիտութեան» և „ողորմածութեան“ մասին։ Ուրիշ ժամանակներ էին, ուրիշ երգեր էին լսում։ Լսել էք դուք

հին արևելեան առակը այն ուժեղ առիւծի մասին, որը չէր սիրում իւր ձագին և կամենում էր նրան ոչնչացնել։ Առիւծը հրեց նրան տգմի մէջ, ցեխոտեց..., ու չճանաչեց նրան։ Օտար առիւծները, վագրերն ու լեռպարդները նոյնպէս ձագին չճանաչեցին։ Այն ժամանակ առիւծը յօշոտեց իւր ձագին։

Առու�ած իմ, էլ ով մնաց, որ չզրպարտէր հայերին և չմշխատէր ամեն տեսակ սուտ մեղադրանքներով մածուցիկ ցեխ շպրտել նրանց վերայ։ Այդ համերգի տաղանդաւոր երգիչն էր հանգուցեալ Վելիչկօն, որը Պետերբուրգի ռուսաց ժողովրդանի սիւներից մէկն էր։ Պ. Վելիչկօն, այդ փոքրիկ բանաստեղծը և մեծ մարդակերը, Կովկասի քաղաքական մասի կառավարչապետի պաշտօնական օրգանի «Ինեակներից ամէն օր հազուագիւտ ոգևորութեամբ և հիւանդոտ թշնամութեամբ հնարում էր զանազան մտացածին լուրեր, աշխատելով բոլոր ազգութիւններին զինել հայերի դէմ։ Մինչև անգամ երբ հասաւ Ցաճկաստանում կատաղուող հայկական կոտորածի գոյժը, պ. Վելիչկօն ապացուցանում էր, որ հայերին հէնց այդպէս էլ պէտք էր...։

Այդ մեղադրանքներին իրրև կենտրոն ծառայում էր այն պնդումը, (կատարեալ անհիմն), որ հայերը չարչի ժողովուրդ են, որ ինչպէս սարդ, ձգել են իրենց ցանցը շրջապատող բոլոր ազգութիւնների շուրջը, որ հայերը ունին շահագործողի (эксплоататоръ) բոլոր հակումները։ Հայերը, գրւում էր այդ յօդուածներում, տիրապետում են անհաշիւ հարստութիւնների և ունեն ուժեղ կապեր, այնպէս որ բոլոր տեղական վարչական մարմինները նրանցից կախումնունեն. նրանք Կովկասի

ամբողջ առևտուրը իրենց ձեռքն են ձգել։ Զրպարտութիւնը իւր գործն էր անում և ռուս հասարակութեան մեծամասնութիւնը, քիչ ճանաչելով հայերին, սիրով հաւատում էր այդ առակներին և գուցէ հէնց մինչև այժմ էլ հաւատում է։ Ճիշտ է, երևան էին գալիս վիճակագրական տեղեկութիւններ, որոնցով կարելի էր դատել թէ ինչով են պարապում հայերը և թէ իսկապէս արդեօք նոքա պարապում են չարչիութեամբ. բայց մեր մէջ արդեօք շատերն են կարդում հատ ժուրնալներ։ Մանաւանդ մի անգամ կարդացածը շուտով է մոռացւում, իսկ այնտեղ հազար ու մի եղանակներով կրկնւում է „շահագործող“, „շահագործող“։

„Русская мысль“ ամսագրի 1896 թիւ Սեպտեմբերի և հոկտեմբերի համարներում և Ա. Ն. Սազոնովի վիճակագրական տեղեկութիւնների մէջ „Հայերը Կովկասում“, որ տպուած էր Գր. Զանչեանի «եղբայրական օգնութեան» մէջ (հր. 1897 թիւ Մոսկվա) ցոյց է տրուած, որ Կովկասի հայերի 95 % ը գիւղացիներ են, որոնք պարապում են երկրագործութեամբ։ Ինչ վերաբերում է քաղաքում ապրող հայերին, նրանցից էլ 90 %-ը պարապում է արհեստներով և այսպէս կոչուած "սև աշխատանքով"։ Կովկասի ոչ արտաքին առևտուրը, ոչ գործարանական արդիւնաբերութիւնը հայոց ձեռքում չեն գտնւում. և որ արդիւնաբերութեան ոչ մի ճիւղում հայերը տիրող տարր չեն կազմում։

Երբ բոլոր այդ մեղադրանքները, չարչիութեան և շահագործութեան մէջ, բաւական հնացան և արդէն ռուսաց հասարակական կարծիքը բաւականաչափ լարեցին հայոց դէմ, այն ժամանակ նրանց երեսին

շպրտեցին մի նոր, ծանր ու վտանգաւոր մեղադրանք, կայսրութիւնից անջատումն (сепаратизмъ) և դաւադրութիւն (крамола)։

Այդպիսի մեղադրանքը արտաքուստ հշմարտանման էր երևում շնորհիւ այն հանգամանքի, որ Կովկասի հայերը անկարող լինելով անտարբեր մնալ դէպի Տաճկաստանի դէպքերը և ցանկանալով օգնել իրենց ճնշուած հայրենակիցներին խօսքով և գործով, զէնքերը ձեռքներին անցնում էին սահմանը և տեղափոխում այնտեղ զէնքեր։ Հայոց չարակամները սկսեցին չափազանցել զէնք անցկացնելու լուրերը՝ հաստատելով, որ հայերը ռուսաց կառավարութեան դէմ ապստամբութիւն են պատրաստում։

Յանկարծ սկսեցին խօսել հայ յեղափոխականների մասին, որոնք ամեն տեղ են, ամեն բան գիտեն, ամեն բանի պատրաստ են։ Նոյնպէս սկսեցին խօսել հայկական միլիոնների մասին։

Այդպիսով խնդրի առաջին մասն կատարուած էր և ամբողջ հայ ազգը ընկաւ կասկածի տակ, կեղտոտուեց ցեխով։ Մնաց խնդրի երկրորդ մասը, ոչնչացնել հայերին, «զսպել» և բնաջինջ անել։

Հենց խնդրի այս երկրորդ մասի կատարումն էր, որ կեանք տուեց և առաջ բերեց հայկական հարցը։

Դժուար է ասել թէ գործը ինչ ձևով էր առաջ գնում. Կովկասի բիւրոկրատիան էր ոգևորում մեր մամուլի զանազան օրգաններին, թէ մամուլն էր ազդում բիւրոկրատիայի վերայ, անհերքելի է միայն այն փաստը, որ բիւրոկրատիան յանկարծ սկսեց իկատար ածել այն տարօրինակ, մարդատեաց նախագծերն ու ծրագիրները,

որոնք քարոզւում էին մեր մամուլի մի յայտնի մասի էջերից. այդ խմբին պատկանողների անունները չեմ տալ, յարգելով առ հասարակ ռուսական մամուլը։

Ամեն մի հայի համար կայ երկու սրբութիւն-ուսումնարան ու եկեղեցի, եկեղեցի և ուսումնարան։

Հայոց ուսումնարանները փակուեցին, իսկ հայոց եկեղեցին զրկուեց իւր իրաւունքներից-այն իրաւունքներից, որոնք սրբազործուած էին աւելի քան հազարամեակով։

II

Հայոց ուսումնարանների փակումն։

Քանի որ Կովկասի վարչութեան ղեկը գտնում էր մեծ իշխան Միխայել Նիկոլայեվիչի ձեռքում, որը լաւ ծանօթ էր ազգաբնակութեանը, կապուած էր նրա հետ անձնական յիշողութիւններով՝, չկար և հայկական հարց։ Հայկական հարցը ծագեց այնժամանակ, երբ Կովկասի փոխարքայութիւնը վերացուեց և հիմնուեց Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի պաշտօնը։ Դա 1882 թուին էր։

1883 թուին առաջին անգամ սկսեցին խօսել հայոց դաւադրութեան մասին։

1885 թուին փակուեցին հայոց ուսումնարանները։

Էջմիածինը կայսրութեան միացնելուց անմիջապէս յետոյ ձեռնարկուեց հայ-լուսաւորչական եկեղեցու համար յատուկ կանոնների մշակումը։ „Մեր Թագաւորի ցանկութիւնն է, գրում էր 1829 թ.ի մարտի 15-ին ներքին գործերի մինիստր Գրաֆ Բլուդովը-Գրաֆ Պասկեվիչ-Էրիվանսկուն, պատրաստել հայ-լուսաւորչական եկեղեցու կանոնադրութեան (положеніе) նախագիծ՝ ըստ կարելւոյն պահպանելով նրա (եկեղեցու) սովորութիւններն ու ծէսերը, որոնք անկասկած թանկագին են ժողովրդի համար“։

Այդպէս էր Նիկոլայ I թագաւորի կամքը։ Պոլժենիան նա հաստատեց 1836 թ.ին Մարտի 11-ին։

Համաձայն T. XI. I. Կ. (հր. 1876 թ) № 1206 և հետևեալ յոդուածներին „հայերին աստուածաբանական գիտութիւնների մէջ կրթելու համար “թոյլատրուեց բանալ Էջմիածնում ճեմարան, իսկ ամեն մի թեմում-մի թեմական դպրոց։ Այդպէս բացուեցին թեմական դպրոցներ 1824 թ.ին Թիֆլիսում, 1837 ին Երևանում, 1879-ին Շուշում և Ն. Նախիջևանում և 1876 թ.ին Էջմիածնի ճեմարանը։

Դրանց հետ միասին բացւում էին հայոց եկեղեցական ծխական ուսումնարաններ, որոնք ծառայում էին իբրև պատրաստական դասարաններ թեմական դպրոցների համար։ Այդ ուսումնարանների թիւը ըստ կզբում շատ չէր։ Բայց հայերը ապրում էին ռուսների հետ նոյն կեանքով, կրելով նոյն ուրախութիւնները և նոյն ցաւերը։ Վաթսունական թւականների փառաւոր շրջանը հայերի համար նոյնպէս անօգուտ չանցաւ։ Ինչքան թանգ էին հայերի համար Պուշկինը, Լերմոնտովը, Նեկրասովը, Գոգոլը, Տուրգենևը, Տոլստոյ, Բելինսկին, Պիսարևը, Գրանովսկին և ուրիշ փառաւոր անունները։ Հայերը կարդում էին նրանց հեղինակութիւնները. նրանց բարերար ազդեցութեան տակ առաջ եկաւ ռուսահայերի հարուստ գրականութիւնը, վառ տաղանդների փայլուն համաստեղութեամբ, օրինակ՝ Աբովեան, Նալբանդեան, Շահազիզ, Նազարեան և ամենահանճարեղ վիպասան—Րաֆֆի ու բանաստեղծ Պատկանեան։

Վաթսունական թւականների շարժումը հայերին էլ ցնցեց։ Հայերը սկսեցին արագաբար դիմել դէպի կրթութիւն և կարճ ժամանակամիջոցում Կովկասը ծածկուեց հայ դպրոցների ցանցով։ 1882 թ.ին Գէորգ Դ. Կաթուղիկոսի օրհնութեամբ բացուեց Թիֆլիսում առաջին, գժբաղդաբար և վերջին, հայ ուսուցիչների ժողովը (СъѢздъ)։

Մեր մամուլի յայտնի մասը սկսեց աղմուկ բարձրացնել։ Ինչպէս... ինչ որ հայերը համարձակւում են հաւաքուել ուսուցչական ժողովի... Դա չափազանց է...։

Եւ նորից սկսուեց զրպարտութիւնը։ Ցիշեցին, որ հայոց ուսումնարաններից մի քանիսում կան Մեծն Հայաստանի (*) պատմական քարտէզները. յիշեցին, որ հայ աշակերտները, օ՜ ի՜նչ յանդգնութիւն, երգում են

(*) «Մեծ Հայաստան» (Մեծ Հայք) դա Հայաստանի մի մասն է, որ մեծ է կոչւում տարբերելու համար այն մասից, որ կոչւում է փոքր (Փոքր Հայք)։ Այդ մենք նշանակումենք, ի միջի այլոց, ի գիտութիւն նոցա, որոնք կաղմեցին աղմկալի ֆելիէտոններ «Մեծ Հայաստանը մինչև Յոստով—Դոնի վերայ։«

հայերէն լեզուով... «Տէր պահեա զկայսրն»։ Caveant consules...։

Զրպարտութիւնը անհիմն էր, բայց մեզնից ով չգիտէ, որ զրպարտութեան այժը հէնց նրա սուտ լինելու մէջն է։

Նշանակուեց վստահելի ու բարեխիղճ մարդկանցից քննութիւն՝ պարզելու համար ճիշտ է արդեօք, որ հայոց ուսումնարաններում հակակառավարչական պրոպականդայ են անում և կապ ունի արդեօք այդ պրոպականդան հայերի դէպի... անգլիացիներն ունեցած համակրութեան հետ։

Եկաւ Կովկաս Օտարադաւանների դէպարտամենտի դիրեկտոր Մուսոլովը և իշխան Է. Է. Ուխտոմսկին։ Քննութիւնը փայլուն կերպով ապացուցեց հայոց ուսումնարանների վրա եղած զրպարտութիւնը ու մեղադրանքի սուտութիւնը։ Դժբաղդաբար Կովկասի փորձուած բիւրոկրատիան այդ էլ էր նախագուշակել։ Տեղական բիւրոկրատները հաւատացնում էին, որ հայերը ցանկանում են վերակենդանել „Մեծ Հայաստանը“, որ կաթուղիկոսը ծեր է ու իր հեղինակութիւնը աւելի բարձր է դասում քան սինոդինը, իսկ հոգևորականութիւնը, ինտելիգենցիան և մամուլը վարակուած են դաւադրութեամբ։

1885թ. փակուեցին հայոց ուսումնարանները։ Փողոց նետուեցին երեսուն հազար աշակերտներ և ինն հարիւր ուսուցիչներ։ Ընդամենը *հինգհարիւր* դպրոց փակուեց։

Այս հարցի մէջ, պատմական տեսակէտից, ամենից աւելի ուսանելի է մեր ժողովրդ. լուսաւոր. մինիստրութեան դերը։ Կովկասեան ուսումնարանական

շրջանի հոգաբարձու Պ. Եանովսկին ամեն ջանք գործ դրեց փակելու համար հայոց դպրոցները, այնինչ թուում է, նրա անմիջական պարտականութիւնն էր պաշտպանել այդ դպրոցները մամուլի վարպետորդիների սուտ յարձակումներից։ Վերջի վերջոյ Պ. Եանովսկին հասաւ իւր նպատակին։ Այդ նոյն Պ. Եանովսկին է, որ *յիսուն* տարի կառավարելով ուսման գործը Ռուսաստանում և Կովկասում, չկարողանալով այդ երկար ժամանակամիջոցում բանալ նոյնիսկ 200 ռուսական դպրոց, կարողացաւ յանկարծ *մի օրուայ մէջ փակել հինգ հարիւր* հայկականը։

Հայոց դպրոցների մի մասը 1886 թ. բացուեցին՝ բարձրացնելու համար մեր թեկնածու, կաթուղիկոսական երկրորդ կանդիտատ, հայերից չ'սիրուած Մակար VI(?) կաթուղիկոսի վարկը։ 1896 թ. Մակարի մահից յետոյ, դպրոցները բոլորովին փակուեցին։

Շատերը ասում էին թէ հայերն իրենք փակեցին իրենց ուսումնարանները։ Հասկանալու համար այդ բանի անմտութիւնը, պէտք է իմանալ թէ ինչ էր պահանջում հոգաբարձու Պ. Եանովսկին։ Իմիջի իւր այլ անընդունելի պայմանների, նա դնում էր այսպիսի դրակոնեան պայմաններ, թէ սովորողները և թէ ուսուցիչները, անսահման քանակութեամբ, կարող են լինել *ոչ*-հայեր, ըստ բարեհայեցողութեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի։ Հայոց լեզուի, հայոց կրօնի դասերը, որպէս երկրորդական (ծրագրից դուրս) առարկաներ, կրճատուում են մինչև ամենավերջին սահմանը։ Ուսումնարանների ծախքը հայերը *ամբողջովին* ընդունում են իրենց հաշուին։

Ճիշտ չէ արդեօք, որ առնուազն տարօրինակ է։ Եթէ թէ ուսուցիչները և թէ աշակերտները լինելու են ոչ հայեր, ինչու են ուրեմն դպրոցներն կոչւում հայկական և որ գլխաւորն է, ամբողջ ծախքը պիտի լինի հայոց հաշւին։

Իհարկէ պէտք եղած ուշադրութիւնը դարձրուեց և հայոց հոգևոր բարձր դպրոցների վերայ։ 1900 թ-ից, հակառակ 1206 յօդուածի տրամադրութեան (Т·XI·Ч·I·) նոր թեմական դպրոցների բացման իրաւունք չի տրւում և մինչև անգամ տաղանդաւոր ու հայերից յարգուած Խորէն Ստեփանէ եպիսկոպոսը արտաքսուեց Կովկասի սահմաններից, իբրև անվստահելի և անհանգիստ անձնաւորութիւն, որովհետև նա Համախու թեմում հանգանակութիւն էր սկսել Բազում բացուելիք հայկական թեմական դպրոցի օգտին։

Յայտարարուեց կառավարչական բացատրութիւն, որ հայոց թեմական դպրոցները, նոյնիսկ Էջմիածնի ճեմարանը, չեն կարող օգտուել զինուորական ծառայութեան արտօնութիւններից, ինչպէս օգտւում են ռուսական և կաթոլիկական դպրոցները (հայ դպրոցները մինչ այդ նոյնպէս օգտւում էին 1887 թ-ից սկսած — նոյն թ-ից երբ մտցրուեց Կովկասում զինուորական ծառայութիւն։)

Վերջապէս եկեղեցական կալուածների խլումը, որոնց եկամուտներով պահւում էին թեմական դպրոցները և ճեմարանը, այժմ իրապէս փակում է այդ դպրոցները։ Երբ ես գրում էի այս տողերը, իմացայ որ ճեմարանը արդէն փակուած է։

Ո՞վ գիտէ, գուցէ այժմ էլ գտնուեն այնպիսի

սրախօսներ, որոնք սկսեն ապացուցանել, որ հայերը իրենք են փակում իրենց դպրոցները և ճեմարանը։

Ուսումնարանների փակմամբ դեռ չփակուեց հայերի համար դէպի գիտութիւն տանող ճանապարհը։ Կային դեռ կրթիչ հաստատութիւններ և որ գլխաւորն է, բարեգործական ընկերութիւններ, որոնք միջոց էին տալիս հայերի չքաւոր դասին սրբիչ ուսումնարաններում ստանալ կրթութիւն։

Եւ ահա հայոց ուսումնարանների փակման հետևում է բոլոր կրթիչ և բարեգործական հաստատութիւնների փակումը։

III

Հայոց կրթիչ եւ Բարեգործական հաստատութիւնների փակումը։

Ի նկատի ունենալով, որ հայերի թիւը Կովկասում 1 ½ միլիոն է, այն տեղի բարեգործական հաստատութիւնների թիւը շատ անբաւարար էր։ Այդ հաստատութիւնների մէջ գլխաւորն էր «Կովկասի հայոց բարեգործական ընկերութիւնը», որի կանոնագիրը հաստատուած էր 1881 թ-ի Յուլիսի 6-ին։

Ընկերութեան համակրելի նպատակը նշանակուած էր նրա կանոնադրութեան առաջին յօդուածում։ Նա հետամուտ է լուսաւորութիւն և արհեստներ տարածելու կովկասեան և անդրկովկասեան հայերի մէջ։ Ընկերութիւնը օգնում է սովորողներին, բացում է,

Ազգ. Գրադարան
Հայ. Գրադարան
ՀԱՅԿ-ԱՐՔԻՎ
Ա. Մեսրոպեան
Ա. Մշակներեան անվան

կառավարութեան թոյլտուութեամբ, նոր դպրոցներ, պահում է հիները, հրատարակում է գրքեր և օգնում է կրթական հաստատութիւններին։

Մօտաւորապէս նոյն նպատակն ունեն և Հայոց ուրիշ բարեգործական ընկերութիւնները — օրինակ՝ «Հայոց մարդասիրական ընկերութիւնը» Բագուում, հիմնուած 1863 թուին և «Հայոց կանանց բարեգործական ընկերութիւնը» Թիֆլիսում, հիմնուած 1881 թուին։ Հազուագիւտ բացառութեամբ այս ընկերութիւնների գործունէութիւնը կայանում էր մեծ մասամբ գիմնազիայի և ռէալական դպրոցների աշակերտներին օգնելում։

«Կովկասի Հայոց բարեգ. ընկ.» օգտուելով իւր իրաւունքից, իւր գործունէութեան 15 ամեայ շրջանում բացել է զանազան փոքր քաղաքներում և մեծ գիւղերում 18 բաժանմունքներ։

Մամուլի մէջ լոյս տեսնող սուտ մեղադրանքների ազդեցութեան — ճնշման տակ 1894 թուին կատարուեց Հայոց բոլոր բարեգործական ընկերութիւնների գործերի մանրամասն ու բազմակողմանի կառավարչական քննութիւն, որը տուեց շատ յաջող արդիւնք յօգուտ բարեգործական հաստատութիւնների։ Հաստատուեց, որ նրանց գործունէութիւնը օրինական էր և երբէք օրէնքի շրջանակից դուրս չէր եկել։

Բայց այնուամենայնիւ այդ քննութիւնից յետոյ հրաման դուրս եկաւ, որ բաժանմունքները բացուել կարող են միմիայն բարձրագոյն թոյլտուութեամբ։ 1899 թուին բոլոր այս Հայոց բարեգործական ընկերութիւնները փակուեցին։

Ի՞նչ մեղք էին գործել նրանք Կովկասի ազ-

մինիստրատորների դէմ։

Այս հարցին իբր ամենագեղեցիկ պատասխան կծառայի բարեգործական ընկերութիւնների այն բնական, կամ աւելի ճիշտն ասած անբնական, կանոնադրութիւնը, որը գրուած է յատկապէս Հայերի համար և որը ամենալաւ կերպով բնորոշում է Կովկասեան բիւրոկրատիայի վերաբերմունքը դէպի Հայերը։

Պէտք է յիշել, որ Հայոց բարեգործական ընկերութիւնների փակումից 2 տարի առաջ, այսինքն 1897 թուին, մեր կառավարութիւնը մշակեց Ռուսաստանի բարեգործական ընկերութիւնների մի նորմալ տիպ, որի նախագիծը ներքին գործերի մինիստրութեան տընտեսական (хозяйственный) դեպարտամենտը հրատարակեց 1897 թուի Յուլիսի 16-ին № 5398, և որ կարևորն է ներկայ դէպքում, նախագիծը 'ի նկատի ունէր և օտարազգակներին։ Պէտք էր միայն արտագրել նորմալ կանոնագրութիւնը, տալ նոր բացուելիք ընկերութեան տնուն և նահանգապետը, առանց յարաբերութեան մէջ մտնելու մինիստրութեան հետ, կը թոյլատրէր նոր ընկերութեան բացումը։ Նորմալ կանոնագրութեան պակասութիւնը նրա խիստ պաշտօնական լինելն է, բայց ընդհանրապէս նա գոհացուցիչ է։ Թւում էր, որ օրէնքը Կովկասի համար էլ պարտաւորեցուցիչ է և ծրագրուած կանոնագրութիւնը պիտանի է և Հայերին։ Բայց այդպէս չվարուեց Կովկասի ադմինիստրացիան։ Նա կազմեց Հայոց բարեգործութեան մի նոր տիպ, մի օրիգինալ տիպ, բարեգործութիւն անելու իրաւունք չունեցող բարեգործական ընկերութիւն։

Այդպէս են կազմուել և իրենց խեղճ գոյու-

թիւնը քաշ տալիս «Թիֆլիսի Հայոց բարեգործական ընկերութիւնը», «Թիֆլ. Կանանց բարեգործական ընկերութիւնը»,« Բագուի մարդասիրական ընկ.»։ Այս բարեգործական ընկերութիւնները այնքան սահմանափակուած են բարեգործութիւն անելու իրաւունքի մէջ, որ մինչև անգամ դժուար է նրանց բարեգործական ընկերութիւն անուանել։ Կարելի է աղքատին տալ հաց, թէյ, կերակրել, հագցնել, բնակարան տալ, բայց չէ կարելի նրանց երեխաներին կրթութիւն տալ, կրթական օգնութիւն տալ և առհասարակ այսպէս կամ այնպէս օգնել լուսաւորութեան վտանգաւոր գործին։ Երբէք։ Դուք կարող էք հագցնել աղքատ երեխաներին, բայց, Աստուած ազատէ, եթէ հագցնէք գիմնազիայի հագուստ։

Ճիշտ չէ արդեօք, որ բիւրօկրատիան հայերին հալածելու և ինչպէս էլ լինի, հայկական հարց ստեղծելու գործում սրանից աւելի հեռու գնալ չէր կարող։ Սխալւում էք, դուք կտեսնէք, որ նա աւելի հեռուն գնաց։

Բարեգործական հաստատութիւնների հետ փակուեցին և Կովկասի ու Անդրկովկասի զանազան քաղաքներում ցրուած համակրելի, համեստ ու գերմարդկային ջանքերով հիմնուած *Դրամարան-ընթերցարաններն*, որոնք հասարակ ժողովրդին տրակտիրներից և գինետներից դուրս էին կորզում և սովորեցնում էին սիրել լուսաւորութիւնը։

Վերջապէս 1900 թւի Յունիսի 16-ին փակուեց հայոց հրատարակչական ընկերութիւնը, որի կանոնադրութիւնը նորին բարձրութիւն Միքայել Նիկոլայեվիչից հաստատուած էր 1880 թւի Յունիսի 21 ին։ «Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերութեան նպատակն է, ասում է կանոնագրութեան առաջին յօդուածը. հրատարակել հայոց լեզուով ինքնուրոյն և թարգմանական գրքերի՝ նկատի ունենալով ընհանուր ցենզուրական կանոնները։» Դա մի համեստ ընկերութիւն էր տարեկան 5000 ռուբլու հասնող փոքրիկ բիւդժէտով, որ իւր 21 ամեայ գործունէութեան միջոցում հրատարակել է 187 կտոր գիրք, որոնցից թարգմանական 133, քաղուածական 33 և ինքնուրոյն 21։ Այդտեղ կան Շէքսպիրի, Դօդէի, Մոպասանի և ճնշող մեծամասնութեամբ ռուս գրողների հեղինակութիւնները։

Որովհետև ձեռնարկած այս հետևողական սիստէմի նպատակն էր, եթէ կթոյլատրուի այսպէս ասել, հայերին նորից զցել նախապատմական դրութեան մէջ, զրկելով նրանց լուսաւորուելու միջոցներից և ստիպելով նրանց ռուսանալ, դրա համար, իհարկէ, կարևոր ուշադրութեան առարկայ եղաւ և հայոց մամուլը։ Նոր օրաթերթեր և ամսաթերթեր բոլորովին չէին թոյլատրւում, բայց դրա փոխարէն հեշտութեամբ փակւում էին հները, չնայելով նրանք լոյս էին տեսնում նախնական ցենզուրայի ենթարկուելով, հետևապէս ինքնուրոյն և ազատ մտքի ամենափոքր նշոյլն անգամ պարունակող յօդուածները չէին թոյլատրւում։ Այդպէս, օրինակ, փակուեցին, «Արձագանք» շաբաթաթերթը, «Տարազ» *մանկական* շաբաթաթերթը, ընդհատուեցին „Մշակ“ և „Նոր-դար“ օրագրերը, տպած այն յօդուածների համար, որոնք թոյլատրուած և հաւանութիւն էին գտած ցենզորից։ Իսկ տեղական ցենզորների խստութիւնը զար-

մանալի է։ Հայոց օրաթերթերը և շաբաթաթերթերը ստիպուած են լինում առաջնորդողներ, ֆելիէտոններ գրել միմիայն թատրոնի մասին։ Այդ էլ կարդացուում է տողումէջ։ Չի թոյլատրուած գրել սունկի վնասակարութեան մասին, որովհետև ցենզորը բացադրում է, սունկը պրաւոսլաւնիների սիրած կերակուրն է։ Չթոյլատրուեց չոր մրգերի արտահանութեան մասին գրած յօդուածը։ Ժամանակը արտահանութեան ժամանակ չէր և ,,մրգեր'' ասելով, Աստուած գիտէ, թէ ինչ կարող էր մտածել հեղինակը։

Արժէ արդեօք շարունակել թուել։ Այս բոլորը պատկանում են հայրենիքի *կուլտուրայնին*, որոնց իհարկէ, անաչառ պատմագիրը իրենց տեղը կյատկացնի։ Այս բոլորը պատկանում են կուրեօզներին, ասում ենք մենք, և մենք ոչ թէ կծիծաղէինք, այլ կքրքջայինք, եթէ այնքան ցաւալի չլիներ տեղական լեզուներով գրողների դրութիւնը, որոնք իրենց ամբողջ կեանքի ընթացքում գրում են եզովլոսի լեզուով, առանց յոյս ունենալու երբևիցէ խօսել մարդկային լեզուով փոքրիկ ժողովուրդների կարիքների մասին։

Ցենզուրայի խստութիւնները հասան մինչ այնտեղ, որ Ռաֆֆու յայտնի հեղինակութիւնները, որոնք ուղղուած են տաճիկների դէմ, և սիրով են խօսում ռուսների մասին, երկրորդ տպագրութեամբ լոյս տեսան միայն արտասահմանում, Մխիթարեանների տպարանում։ Մինչև անգամ արգելուած է պատմական ,,Վարդանանց պատերազմի'' ներկայացումը, որտեղ նկարագրուած է V դարում քրիստոնէութեան համար մղած հայերի կռիւը պարսիկների հետ։ Ծշմարտու-

թիւնը պահանջում է ասել, որ Պարսկաստանում այդ պիեսայի խաղալը ոչ թէ միայն թոյլատրուած է, այլ մինչև անգամ թագաժառանգ իշխանը յաճախում է այս պիեսան տեսնելու։

IV

Եկեղեցական կալուածների խլումը եւ կաթուղիկոսի կոչման նուազացումը։

Բոլոր վերոյիշեալ միջոցները նպատակ ունէին արմատախիլ անել հայ լեզուն։ Այժմ նայենք այն ձեռնարկներին, որոնցով, մեր, հայերիս կարծիքով, Կովկասի ադմինիստրացիան կամենում էր փորել հայ եկեղեցու հիմքը, որը (եկեղեցին) դժբաղդ ժողովրդի միակ մխիթարութիւնն է։

1903 թ. Յունիսի 12-ի *Նովոյեմա*։ Յունիսի 12-ին յայտարարուեց հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածների խլման մասին։ Այդ նովելլան, որը հէնց մինիստրների ժողովումն էլ հաւանութիւն չէր գտել, ունի իւր ուսանելի պատմութիւնը։ Երբ փակուեցին հայոց ուսումնարանները, Կովկասի ադմինիստրացիան սկսեց գրաւել այն կալուածները, որոնց եկամուտով պահւում էին այդ դպրոցները։ Ապացոյցները, հրովարտակները, կալուածագրերը, որ այդ կալուածները լիովին պատկանում են հայոց եկեղեցական հաստատութիւններին, չկարողացան կանգնեցնել իշխանութիւնն-

բին։ Ուսումնարանական շրջանի հոգաբարձուն բաց կերպով յայտնեց, որ եթէ նրա կարգադրութիւնները հայերը չեն հաւանում, թող դիմեն դատարան. իսկ ադմինիստրացիան պահանջում էր անպայման հնազանդուել։ Այդպիսով շատ կալուածներ իրապէս հայերից խլուեցին։ Երբ Վեհափառ կաթուղիկոսի բողոքները չօգնեցին, այնժամանակ դատարանին պահանջներ ներկայացուցին, որոնք, ինչպէս պէտք էր սպասել, բոլորը լիովին գոհացուցին, դնելով լուսաւորութեան մինիստրութեան վերայ դատաստանական ծախքերի խոշոր գումարը։ Եւ իսկապէս հայոց եկեղեցական հաստատութիւնները իրենց կալուածների տէրն էին 1876 թուի հրատարակած XI. Т.Ч. I. № 1212 յօդուածի հիման վերայ։ Նաև հոգեր և կալուածներ Էջմիածնի սեփականութիւնն էին կազմում դեռ շատ վաղ ժամանակներից—պարսիկների տիրապետութեան ժամանակից, մասամբ իբր առատ ընծաներ շահերի կողմից, որոնք սիրով էին վերաբերում Էջմիածնի սրբութեանը և ընդունում էին նրա իրաւունքներն ու առաւելութիւնները։ Երբ մեր դատարաններն վճռեցին յօգուտ հայերի, Կովկասեան ադմինիստրացիային օգնութեան եկաւ Յունիս 12-ի նօվելլան։ Նա միանգամից զրկեց հայ եկեղեցին ապրուստի միջոցներից։ Հայոց եկեղեցին զրկւում է իւր կալուածների և դրամների եկամտից ու տոկոսից օգտուելու իրաւունքից. նա իրաւունք չունի կարգադրութիւն անելու, բայց *պահպանում է սեփականատէր անուան իրաւունքը։*

Օրիգինալ իրաւունք-առանց իրաւունքի։ Բայց եթէ իսկապէս կարելի էր ստեղծել բարեգործական

հաստատութիւն առանց բարեգործելու իրաւունքի, ինչո՞ւ ուրեմն չէ կարելի հիմնել մի նոր սեփականատիրութեան իրաւունքի ինստիտուտ (ճեմարան), առանց սեփականատիրութեան իրաւունքի ըմբռնման։ Մինչև անգամ այն, ինչ որ կոչակուելու է հայ եկեղեցուն՝ չպէտք է պատկանի եկեղեցուն, այլ գանձարանին։ Հայ եկեղեցին ընդունւում է իբր անվստահելի (недѣеспособной)։ Իրաւաբանական տեսակէտով օրէնքը ստեղծեց մի ինչ որ նոր բան, գիտութեան մէջ անյայտ, մի ինչ որ Անօրմալ բան։ Գանձարանը՝ իբր եկեղեցու խնամակալ. բայց ամեն մի խնամակալութիւն ունենում է վերջ, իսկ այս-երկնային թագաւորութեան պէս անվերջ է։ Խնամակալութեան տակ գտնուած անչափահասները օգտւում են իրենց սեփականութեան եկամտից և տոկոսից, իսկ այստեղ ոչինչ չեն ստանում և ոչինչ էլ չեն ստանալ։ Ահա ձեզ մի փոքրիկ օրինակ. Նոր-Նախիջևանում, Բազարնիյ հրապարակում գտնւում է Հնդկաստանցի անգլիահպատակ մի հայի նուիրած մի մեծ շինութիւն. վերին յարկերում գտնւում է հայոց թեմական դպրոցը. իսկ ներքևի յարկում մի շարք մագազիններ, որոնց եկամուտով պահւում է դպրոցը։ Այժմ արդէն երկու տարի է, որ վարձողները քրէհը տանում են գանձարան. իսկ դպրոցը հազիւ հազ ծայրը ծայրին է հասցնում մասնաւոր ողորմութիւններով։ Հայկական միւս դպրոցներում և ճեմարանում էլ աւելի վատ է դրութիւնը։ Ուսուցիչները բառի բուն նշանակութեամբ քաղցած են, սարք ու կարգը անտանելի է։ Եւ այդպիսի անբնական դրութիւնը գոյութիւն ունի ոչ թէ որևէ Տաճկաստանում կամ Պարսկաստանում այլ եւրոպական պե-

տուլթեան մէջ։ Հարցնում եմ, այս բոլորը ինչո՞ւ համար էին, որի՞ն էին պէտք ու որի՞ն են պէտք։

Եթէ 1903 թուի յունիս 12-ի նովելլայի նշանակն էր զրկել հայ եկեղեցին կարողութիւնից և նօրմալ ու կանոնաւոր ապրելու իրաւունքից, 1903 թուի հոկտեմբեր 18-ի նովելլայի նպատակն էր զրկել կաթուղիկոսին ամեն մի ինքնուրոյնութիւնից ու նշանակութիւնից, իսկ ինքնավար եկեղեցին այն իրաւունքներից, որոնք Գրիգոր Լուսաւորչի ժամանակից, այսինքն V դարից, նրա սեփականութիւնն էին։

Համաձայն Т. XI. Ч. 1. № 1140 յօդուածի կաթուղիկոսը ներկայացնում է Սինօդի անդամացու երկու կանդիտատներ և դարերով սրբազործուած սովորութեան համաձայն, սովորաբար առաջին կանդիտատը հաստատւում է թագաւոր կայսրից։ Բայց վերջին տասնամեակում կաթուղիկոսի առաջարկները մնում են ձայն բառբառոյ յանապատի և սինօդի անդամներ են նշանակւում առանց կաթուղիկոսի գիտութեան, երբեմն էլ հակառակ նրա կամքի, այնպիսի մարդիկ, որոնք արժանաւոր չեն կամ յամենայն դէպս կաթուղիկոսին հաճելի չեն։ 1903 թուի Հոկտեմբեր 18-ի նովելլան հայ եկեղեցու ծայրագոյն պատրիարքի դրութիւնը արմատից է խախտում։ Կաթուղիկոսը մինչև անգամ քահանաներին և սարկաւագներին չէ կարող նշանակել առանց իշխանութեան և պոլիցիայի հաւանութեան ու թոյլտուութեան։ Դուրս է գալիս մի ինչ որ զարմանալի և ուղղակի անհաւատալի բան, որովհետև այդպիսով եկեղեցու ստորին պաշտօնեաների վերայ անգամ կաթուղիկոսը աւելի քիչ իրաւունք ունի, քան, օրինակ, մի որևէ քաղաքա-

մասի պրիստավ կամ մի շրջանային վերակացու։ Մի մխիթարական բան մնաց կաթուղիկոսի համար, այն է, որ Կովկասի բիւրօկրատիան սրանից հեռու գնալ չէր կարող, էլ տեղ չկար...։

1868 թուից հրատարակւում է առանց նախնական ցենզուրայի կաթուղիկոսի պաշտօնական օրգան „Արարատը“ համեստ բովանդակութեամբ։ 1897-ից „Արարատը“ պարտաւոր է ներկայանալ Թիֆլիսի ցենզօրին։ Մինչև անգամ հայոց օրացոյցների գրաքննութեան իրաւունքը կաթուղիկոսից խլուեց։ Ասենք սրանք փոքրիկ բաներ են, բայց ընորոշ են, որ ցոյց են տալիս թէ տեղական իշխանութիւնները վճռել են, որքան հնարաւոր է, ստորացնել ուսթսունամեայ ծերունի պատրիարքի արժանապատուութիւնը, պատիւը և կոչումը ամէն միջոցներով, նոյն իսկ նրա ինքնասիրութեանը փոքրիկ խայթոցներ պատճառելով։ Երկու խնդրի մէջ սենատն էլ կրճատեց կաթուղիկոսի իրաւունքները, այն է՝ ապահարզանի և երդման խնդիրներում։ Համաձայն Т. XI. Ч. I. № 1132 յօդուածին, «ղեկավարուելով հայ-լուսաւորչական եկեղեցու որոշումներով... Պատրիարքը *վեղարակրաւորեալ* վճռում է բոլոր զուտ կրօնական գործերը։» Ապահարզանը, շնորհիւ պսակագրութեան ծիսակատարութեան և երդումը եկեղեցու մէջ, հայ եկեղեցու հնաւանդ կանոնով համարւում են կրօնական գործեր։ Սենատը տալիս ուրիշ, մեր եկեղեցու սկզբունքների հետ կապ չունեցող բացատրութիւն։ Այժմ ապահարզանը հանուած է կաթուղիկոսի իրաւասութիւնից, իսկ երդումը պիտի ընդունել ռուսերէն լեզուով։

Այդպիսով, թագաւորութեան հանճարեղ գործիչների, գրաֆ Լորիսներների, Պասկեվիչների, Բարեատինսկիների և ուրիշների ամենալաւ հակումները, որոնք պնդում էին բարձրացնել հայ հոգևորականութեան հեղինակութիւնն ու նշանակութիւնը, բոլորովին մոռացուեցին և ամեն մի հայի աչքում իրը սրբութիւն ընդունուած կաթուղիկոսական կոչումը, 1903 թուից սկսած, յարգելի լինելուց անգամ դադարեց...։

Կաթուղիկոսի կոչման նուազացման հետ զուգընթացաբար բարձրանում էր Սինոդի պրակուրորի պաշտօնը, որը սկսել էր գործել համաձայն զանազան շրջերակաների, հրամանների և յատուկ կարգադրութիւնների։ Սինոդի պրակուրորը սկսում է իւր կոչման անհամապատասխան մի դեր խաղալ, ստանում է գերակշռող նշանակութիւն։ Հակառակ Т. XI. Ч. I. № 1139 և հետևեալ յօդուածների, պրակուրորը սինոդի դիւանատունը հաշուում է իւր սեփականը, պաշտօնի է հրաւիրում կաթուղիկոսին ուղղակի անհնազանդ և նոյն իսկ թշնամի անձնաւորութիւններ, բոլորովին 'ի չիք հաշուելով պատրիարքին։ Կաթուղիկոսը, լինելով սինոդի նախագահը, իրաւունք չունի հրամայելու սինոդի դիւանատան գրագրին անգամ։ Սինոդի նախկին պրակուրոր պ. Կանչելին այդ տեսակետում յատուկ փառք վաստակեց, թոյլ տալով իրեն երբեմն մինչև անգամ բարկանալ կաթուղիկոսի ներկայութեամբ և միշտ նրա դէմ ինտրիգներ լարելով։ ,,Россія'' լրագրում երդուեալ հաւատարմատար Գ. Բալուզեանը բերել է անհերքելի և ճնշող փաստեր, որ Պ. Կանչելին գերագասում էր ապրել Թիֆլիսում, ուր պարտաւոր էին ներկայացնել

նրան սինոդի ամբողջ գործավարութիւնը։

Այդպիսով կարծես Էջմիածնի սինոդը ոչնչացած էր և գործում էր պ. Կանչելու գրասենեակը...։

V

Ինչո՞ւ են հայերը յուզում:

Ինչո՞ւ են հայերը յուզում։ Այդ հարցին մենք արդէն պատասխանեցինք։ Յիշեալ հանգամանքները, որոնք վերաբերում էին ուսումնարաններին, կրթիչ և բարեգործական հաստատութիւններին, եկեղեցուն, և կաթուղիկոսին, շատ յուզիչ էին և այդ հանգամանքների ամենաարագ կերպով ի կատար ածելու յատուկ միջոցները չէին կարող նպաստել հայերի մէջ երբևիցէ խաղաղութեան վերականգնման։ Մենք զգում էինք, որ անպայման հալածուում ենք, որ Կաթուղիկոսի աղերսանքը գործի չեն գնում։ Մեզնից ամէն մէկի գլխում ծագում էին նորանոր մռայլ մտքեր։ Իրականութիւնը բերկրալի չէր։ Մենք ինքներս ըսկսեցինք հետզհետէ աւելի ու աւելի կասկածոտ դառնալ։ Այս բոլորը ո՞ւր կտանի մեզ։ Ինչո՞ւ. անձկութեամբ հարցնում էինք մենք։ Այլևս կասկած չէր կարող լինել, մեզնից պահանջում էին բռնի ռուսացումն։ Եւ մենք չէինք կարող չնկատել, որ հայոց

լեզուի դասաւանդութիւնը ամեն տեղից արտաքսուած է, նոյն իսկ Լազարեան Արևելագիտութեան ճեմարանից, որը հիմնուած է հայերի ձեռքով, հայերի, որոնք յայտնի ծառայութիւն էին մատուցել Ռուսաց տէրութեան: Հայոց լեզուն հալածանքի մէջ էր: Հայոց կրօնի դաս կամ չէր աւանդւում կամ աւանդւում էր որպէս ոչ պարտաւորեցուցիչ, որպէս երկրորդական առարկայ, միկրոսկոպեան չափերով և ադմինիստրացիան ամեն կերպ աշխատում էր, որ հայոց կրօնի դասաւանդութիւնը լինի ռուսաց լեզուով: Ո՞ւմ համար է գաղտնիք, որ, օրինակ, Նոր-Նախիջևանցիները հասնեակ տարիներ աշխատում են բանալ քաղաքի հաշուով մի գիմնազիա կամ ռէալական դպրոց այն պայմանով, որ հայերի համար կրօնը աւանդուի հայերէն լեզուով: Երկու անգամ մեր պատգամաւորները գնացին Պետերբուրգ և մի անգամ էլ Խարկով հոգաբարձու պրոֆէսոր պ. Ալէքսէենկոյի մօտ: Զուր աշխատանք: Այդպիսով այժմ էլ չունենք ոչ գիմնազիա, ոչ ռէալական դպրոց: (*)

Այնուհետև այլևս հեշտութեամբ չէ թոյլատրւում հայոց նոր եկեղեցիների կառուցումը և եղան խստաս մերժման դէպքեր: Բայց այս բոլորը գունատւում

(*) Այս տողերը գրելուց յետոյ յայտարարուեց Ապրիլի 17-ի հրամանը, «կրօնի համերաշխութեան» մասին: Այս հրամանը Կովկասեան Ադմինիստրացիայի դէպ հայ-լուսաւորչականները ունեցած աղմկալի գործունէութեան ամենալաւ կրիտիկան է:

են համեմատելով այն վտանգի հետ, որ սպառնում է հայերին,, Կովկասում պրաւոսլաւնիութիւն տարածող'' ընկերութեան կողմից: Հայերը քրիստոնէութիւն ընդունել են դեռ IV դարում և շատ գրկանքներ են կրել իրենց հաւատի համար Տաճկաստանում: Բազմաթիւ քրիստոնեաներ կային Հայաստանում դեռ Փրկչի օրով: Եւ ինչ: Մթթէ զարմանալի չէ, որ պէտք են զգացել մեզ երկրորդ անգամ քրիստոնէացնելու: Փոխանակ իւր բոլոր ջանքերը թափելու Քրիստոսի հաւատին բերելու համար վայրենի լեռնականներին, կումիկներին ու ուրիշներին, ,,Պրաւոսլաւնիութիւն տարածող" ընկերութիւնը ձեռնարկեց քրիստոնէացնել հայերին, գործունեայ մասնակից ունենալով նոյն իսկ նահանգապետներ, որոնք յաճախ մոռանալով իրենց ուղղակի պարտականութիւնը՝ յանձն էին առնում միսիոներների պաշտօն: Այդպէս էր, օրինակ, Երևանի նահանգապետ Շալիկովը: Երբեմն քահանաները յաճախում էին բանտերը, բանտարկուածներին, դատուողներին զանազան խոստումներ էին անում. իսկ ,,պրաւոսլաւնիյ'' հայերը կառավարութեան յատուկ հոգացութեան առարկաներն էին: Տէրութեան ծառայութեան մէջ հայերը վաղուց չէին ընդունւում: Հին ծառայողներին առաջարկում էին պաշտօն Ռուսաստանում: Եւ հայի մետրիքական վկայականը արդէն ինքն ըստ ինքեան ապացոյց էր նրա (հայի) քաղաքական անյուսալիութեան:

Սկսուեց հայերի, որպէս հասարակական հանգստութեան վնասակար մարդկանց, Կովկասի սահմաններից խմբական արտաքսումը: Հազարաւոր մարդիկ թողնում էին իրենց պարամունքները, ընտանիքները, ընա-

կավայրերը միայն քմահաճոյքի կամ կասկածի պատճառով, առանց դատի, քննութեան, միմիայն ստորին պոլիցիականների „քննութիւնից“ յետոյ, իսկ այդ քննութիւնները միշտ դաղանիք էին մնում նոյն իսկ իրենց, քմահաճոյքի այդ զոհերի համար։

Այդ բոլոր հայերը արտաքսւում էին դէպի անսահման կայսրութեան զանազան քաղաքները, որպէս ոճրագործներ պրոխոդնոյ վկայականով։ Որքան էին անմեղ զոհերը, քանի՞ քանի՞ մարդիկ քայքայուեցին, քանիսները չկարողացան տանել տանջանքները. որքան վիշտ, որքան արտասուք։ Ինչպէս կարող էր ժողովուրդը գոհ լինել, ուրախանալ, ծիծաղել։ Ինչպէս կարելի էր անվրդով մնալ։

Իսկ Տաճկաստանից գաթղած հայերը։ Նոքա քրդերի կատաղութիւնից ազատուելու համար փախել էին ու ապաւինել Կովկաս—առանց անցագրերի։ Նոցա իսկոյն Կովկասից դուրս ղրկեցին դէպի Ռուսաստանի խորքերը։ Երբ ես գրում եմ այս տողերը, իմ ձեռքումը է գտնւում Ուֆիմեան նահանգից, Մենզելինսկուց, գրուած մի նամակ։ Նամակը ստորագրած են 15 խընդրատուներ։ Նոքա չէին կարող անցաթուղթ ունենալ, որովհետև նոքա *փախել էին* տաճիկների հալածանքից և Կովկասի ադմինիստրացիան ուղարկեց նոցա հեռու Մենզելինսկ։ Նոքա լեզու չգիտեն, բառի բուն նշանակութեամբ սոված են, չունեն և ոչ մի կտոր հաց։ Թոյլ տուէք հարցնել, ո՞րն է նոցա յանցանքը։ Արդեօք ա՞յն, որ նրանք քրիստոնեայ են ծնուել մուսուլման երկրում, ուր քրիստոնէի համար օրէնք չկայ։ Նոքա եկան մեզ մօտ, քրիստոնեաների մօտ։ Իսկ մենք ի՞նչ արինք. մենք

նրանց արտաքսեցինք։

Գիտէ՞ արդեօք ընթերցողը Սուխումի շրջանում և առհասարակ Սև ծովի ափերում բնակած հայի բազմաչարչար պատմութիւնը։ Տաճկաց պատերազմից յետոյ, նոքա գաղթեցին այստեղ Տրապիզոնից, Սամսոնից և շրջակայքից։ Այն ժամանակ այդտեղը անանցանելի ճահիճներ էին։ Կեանքի պայմանները սարսափելի էին։ Գաղթածներից հազարաւորներ էին մեռնում տենդից։ Եւ ահա եկուոր հայերը, ինչպէս հաստատում է իշխան Շիրվաշիձէն, յանձն առան հսկայական աշխատանք՝ ցանելու այդտեղ ծխախոտի լաւ տեսակներից։ Նորանք կենդանացրին մինչ այդ քնած երկիրը։ Հողի արժէքը բարձրացաւ ու սկսեց մեծ վարձագներ բերել (*)։ Շատացաւ գանձարանի եկամուտը։ Ծխախոտագործութիւնը հասաւ զարմանալի կատարելագործութեան և այս փակտ է, որ այժմ այնտեղից ծխախոտ է արտահանւում նոյն իսկ դէպի... Եգիպտոս։ Հայերը երկրին ընտելացան, շինեցին իրենց համար տներ, շինեցին եկեղեցի։ Նոցա թիւը հասնում է 20,000-ի։ Յանկարծ Կովկասի ադմինիստրացիայի հրամանն է գալիս-հայերին հեռացնել այնտեղից և բնակեցնել Սիբիրի խորքերում։ Միջնորդութիւնները, աղերսանքները չօգնեցին, բայց բարեբաղդաբար գործի մէջ խառնուեցին գիտական ընկերութիւնները և Կովկասը ճանաչողները։

(*) Հողի մի դեսեատինը, որ առաջ բերում էր 1 ռուբլի շահ, այժմ բերում է 20-30 ռ։ Դեսեատինի արժէքը կրկնապատկուեց 15 անգամ։ Առաջ նա արժէր 20-30 ռ. իսկ այժմ 300 400 ռուբլի։ „Судьба табаководства на черноморск. побережьѣ“ А. Калантаръ, Тифлисъ 1905.

Գեներալ—Լէյտենանտ Մալման խոստացաւ այդ մարդոց վիճակը հոգալ։ Իսկ ինչքան կան դոցա նմանները, որոնց յուսահատութիւնը, արտասուքը մենք չենք տեսնում, չգիտենք և որոնց վիճակը ոչ ոք ուշադրութեան չէ առնում։(*)

Եւ որպէս վերջին վիրաւորանք, որպէս թաղման մարշի վերջին մռայլ ակորդը, անտանելի, այրող ցաւով պատեց մեր բոլորի ուժասպառ սրտերը Բագւի սպանդանոցի սոսկալի լուրը։ Իշարկէ Ա. Մ. Կուզմինսկու սենատորական քննութիւնը կհանգստացներ հասարակական կարծիքը, եթէ տեղական իշխանութիւնները հեռացուէին պաշտոններից։ Ահա թէ ինչու ապրելի 10 ին բաւականակ զանազան ազգութիւնների և պարապմունքների պատկանող 600 աչքի ընկնող անձնաւորութիւններ ներկայացրին սենատոր Կուզմինսկուն մի աղերսագիր, որտեղ ասւում է, որ սենատորի ձեռնարկած քննութիւնը, գտնելու Բագւի կոտորածի պատճառը, անյաղթելի խոչնդոտի կհանդիպի, որովհետև մամուլին արգելուած լինելով խօսել այդ դէպքերի մասին, դրա հետ միասին տեղական իշխանութիւնները, որոնք այնքան ցաւալի դեր խաղացին փետրուար 6-9 օրերում, միջոց

(*) Այն Տաճկահպատակ հայերը, որոնք ընդունել են ռուսահպատակութիւն- կատարելով հպատակութեան բոլոր պարտականութիւնները, Բսան տարուայ ընթացքում Ռուսաստանում սեփականութիւն ձեռք բերելու իրաւունքից զրկուածեն, իսկ անցնելով ռուսահպատակութեան, նրանք կորցրել են իրենց այն սեփականութիւնները, որ թողել են Տաճկաստանում։ Ահա թէ ինչու համար տաճկահպատակ հայը վախենում է ռուսահպատակութիւնից, ինչպէս կրակից։

ունենալով ազդել՝ „կփակեն բոլորի բերանները“։ „Այդ ի նկատի ունենալով Բագւի քաղաքացիները ճշմարտութիւնը երևան հանելու համար գտնում են անպայման անհրաժեշտ. I. հեռացնել պաշտօնից, քննութեան ժամանակամիջոցում, նահանգապետ Նակաշիձէին ու նրան ենթարկւող բոլոր պօլիցիական պաշտօնեաներին. II. իրական միջոցներ ձեռնարկել վարչական կարգով սպառնալիքի դէմ և III. թոյլ տալ հասարակութեան և հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչներին մասնակից լինել քննութեան, դարձնելով բաց—հրապարակային։

VI

Ի՞նչպէս կարելի է լուծել հայկական հարցը.

Նախ քան պատասխանել այդ հարցին, ես անհրաժեշտ եմ համարում կանգնել հայկական հարցի մի իրողութեան վերայ, որը դէպ ինքն է գրաւում ռուս հասարակութեան ուշադրութիւնը և շատերին անհասկանալի է և որը յամենայն դէպս մեր մամուլի մի որոշ խմբի կողմից սխալ է պարզաբանուած։ Ես խօսում եմ հայ յեղափոխական—կոմիտէների մասին։

Հայերի մէջ յեղափոխական մարմինների կազմուելու հէնց կարելիութիւնը անկարելի էր թւում։ Հայերի մշտական նշանաբանն է եղել. «ես չարչարւում եմ, ես տանջւում եմ, հեռւապէս.—ես ապրում եմ,» (**)

(**) Экономическое положеніе турецкихъ армянъ. Гр. Арцруни Москва 1880 г.

Եւ բոլոր գիտնականները, թէ ռուս, թէ արտասահմանեան, այդ հարցում բոլորը այդ կարծիքի են, տարաձայնութիւն կարծիքների մէջ չկայ. հայերը ընդունում են որպէս անպայման *խաղաղ* տարը, առանց որևէ հակման դէպի կռիւ, բնական հակակրութիւն ունեցող դէպի զէնքը։

Բայրոնը, որը լաւ էր ուսումնասիրել հայոց պատմութիւնը, ասում է. «դժուար է գտնել մի ազգ, որի պատմութիւնը աւելի քիչ արատաւորուած լինի ոճրագործութիւններով, քան հայոց ազգինը, որի բնորոշ գծերն են առաքինութիւն և հեզութիւն, իսկ արատները — միմիայն բռնութիւնների հետևանքները։ (*)

Ուրեմն որտեղից առաջ եկան հայ յեղափոխական կոմիտէները։

Երբ ամբողջ Տաճկա-Հայաստանը լողում էր արեան մէջ, հայերը յաղթեցին իրենց դէպ զէնքը ունեցած զգուանքը և ձեռքները զէնք վերցրին։ Ռուսաստանում և արտասահմանում սկսեցին կազմուել խմբեր, կոմիտէներ։ Երիտասարդութիւնը զինւում էր, անցնում էր Տաճկաց սահմանը, գնում էր դէպ այն անխուսափելի մահը, որ իւր սարսուռներով և քրդերի գազանութիւններով յուսահատութիւն էր առաջ բերել։ Եթէ ցանկանում էք, անուանեցէք նրանց յեղափոխականներ, բայց նրանց շարժումը ոչ թէ Ռուսաստանի՝ այլ Տաճկաստանի դէմ էր։ Որա համար, խօսելով հայկական հարցի մասին Ռուսաստանում, չը պէտքէ խօսել հայերի այն յեղափոխական շարժման մասին, որը ունի այլ նպատակ։ Ես աւելին կասեմ, այդ շարժումը ոչ թէ միայն թշնամական չէ Ռուսաստանին, որպէս տէրութեան, այլ անպայման օգտաւէտ է նրան, որպէս յայտնի հակադրութիւն մի ուրիշ, աւելի ուժեղ շարժման, որը դեռ յայտնի չէ ռուս ժողովրդին — *համիշամութեան*, որի հետ մենք շուտ թէ ուշ պիտի գործ ունենանք և որի համար բաւարար հիմք է կառուցանում Կովկասեան բիւրօկրատիայի կարճատես քաղաքականութիւնը։ (**)

(*) Lord Byrons, Correpondence let 258. Venise. 2 Yanv. 1817.

(**) Մայիսի 2-ին ողջունելով Կովկասի փոխարքային Ն. Նախիջևանի կայարանում, երկու հարեան քաղաքների — Ռոստովի և Նախիջևանի հայերի կողմից, ահա թէ ի միջի այլոց մենք ինչ ասացինք. «Գուցէ Զեզ կասեն, որ եթէ ոչ բոլորովին, գոնէ մեծ մասամբ, հայկական հարցի սուր կերպարանք ստանալու մէջ մեղաւոր են հայ յեղափոխական կոմիտէները։ Եթէ յիրաւի գոյութիւն ունեն այդպիսի կոմիտէներ, այդ նշանակում է, որ Կովկասում ամեն ինչ կարգին չէ, որ նրան բայքայում է մի ինչ որ օրգանական աֆտ (порокъ)։ Միմիայն հիւանդ օրգանիզմի մէջ են զոյանում միկրոբներ։ Բայց ո՞ր փորձուած բժիշկը կսկսի մաքառել միկրոբների դէմ։ Բժիշկը բժշկում է տիրող այն կարգ ու կանոնը, այն պայմանները, այն միջավայրը, որոնց շնորհիւ միկրոբների կենսունակութիւնը կարող է շարունակուել։ Հմուտ կառավարչական խելքով դուք այդ հասկացաք, ձերդ պայծառափայլութիւն, երբ Մարտ 30-ին Գենեռալ Մալամայի անուամբ տուած հեռագրում դուք հաճել էիք շեշտել, որ դուք պիտի յենուէք լաւագոյն մեծամասնութեան վրայ։ Այդպիսի մեծամասնութիւն մեզնում կայ։ Մենք գիտենք, որ դուք սիրում էք պարզասրտութիւն և

ցոյց տալով հայ յեղափոխականների կողմից սպառնացող վտանգը, մի քանի եռանդուն ռուսացնողներ առաջարկում էին հետևեալ բանաձևը հայկական հարցը լուծելու համար. «Կովկասը ռուսացնելու և հայոց բաժանուելու (autonomie-ից) գաղափարը ընդմիշտ արմատախիլ անելու համար միակ միջոցն է — հայերին տանել Սիբիր և այնուհետև ազատելով Անդրկովկասը հայկական շփոթութիւններից՝ հայոց փոխարէն այնտեղ բնակեցնել Պրուսօսլաւնիյ գաղթականներ։» Կարճ և ազդու. ինչ օգուտ, եթէ այդ մարդատեացներին ասել թէ, չէ կարելի այդպիսի խիստ կարգադրութիւններ անել կենդանի մարդկանցից կազմուած մի ամբողջ ժողովրդի համար։ Ո՛չ. չափազանց է այդ մարդակերութիւնը։ Պէտք է փնտռել ուրիշ միջոցներ, եթէ ոչ յանուն բարոյականութեան՝ գոնէ յանուն առողջ դատողութեան, յանուն սոցիալական և տէրութեան շահերի։ Ժամանակ է ընդհատել այն գարշելի անեկտոդի կրկնելը, որը պատում է բերնից բերան, իբր թէ Կովկասի մի բարձրաստիճան բիւրոկրատ ասել է. «ես կը

անկեղծութիւն, թոյլ տուէք ուրեմն ինձ ամբողջ պարզասրտութեամբ և բոլոր անկեղծութեամբ մեծամասնութեան անունից ձեզ յայտնել, որ նա (մեծամասնութիւնը) Ձեզ հլու հնազանդ կլինի և ձեզ հետ ձեռք ձեռքի տուած կգնայ, ուր որ ցանկանաք, եթէ միայն դուք իրաւացի կդտնէք մեր բնական ցանկութիւնը — հայ մնալ, պաշտել մեր հնադարեան կրօնը, պահել մեր հին լեզուն. եթէ դուք կոչնչացնէք այն բացառիկ, սահմանափակող նօվելլաները, որոնք ստորացնելով հանդերձ հայերի մարդկային արժանապատուութիւնը, չեն օգնում մեր տէրութեան փառքի աճելուն։» (Донск. рѣчь, отъ 3 мая 1905.)

հանդստանամ միայն այն ժամանակ, երբ Թիֆլիսի մուդէում ի ցոյց կտրուի հայի պաճուճապատանը, որպէս ապացոյց, որ միժամանակ Կովկասում հայեր են եղել։»

Այդ գարշելի անեկտոդի դէմ ես կդնեմ մեր կայսրութեան մի խելօք գործչի ազնիւ խօսքերը։ Լսելով Անդիջանի դէպքերի մասին՝ նա զառնութեամբ բացականչեց. «Ահա արդէն քսան տարի է, որ ես շարունակ լսում եմ ռուսացման փրկարար ծրագրի մասին, մեզ խոստացած անհամար բարիքների փոխարէն ես տեսնում եմ, որ Լեհաստանում մեզ ատում են, Ֆինլանդիայում — արհամարհում են, Կովկասում նախկին սիրոյ փոխարէն — ամենուրէք թշնամութիւն է և մինչև անգամ Անդիջանում, ուր դեռ չէ չորացել ռուս արեան հեղեղը՝ ապստամբութիւն է պատրաստում»։

Մամուլի մի յայտնի մասը երկար և յամառ, առանց ուշադրութիւն դարձնելու պատմութեան և իրողութիւնների վերայ, ստում էր և զրպարտում հայերին, որոնք յանկարծ խորթ որդիք են դարձել այն հայրենիքի, որտեղ նրանք ծնուել են, որտեղ քրտնաթոր ճակատով աշխատում են և որին նրանք, մընացած բոլոր ազգութիւնների հետ հաւասարապէս, իրենց արեամբ պաշտպանում են։ (*)

(*) Հայերը տուել են Ռուսաստանին այնպիսի տաղանդաւոր գեներալներ, որպիսիք էին Մադաթովը, Արղութեան-Երկայնաբազուկը, Բեհրուդովը, Լորիս-Մելիքովը, Շէլկովնիկովը, Տէր Դուկասովը, Լազարևը, Ալիխանովը, Տէր Աստուրովը և այլն։ Ներկայ պատերազմին հայերը չեն տուել եռ՝ մի գեներալ. նրանց համար այդ ասպարէզը արդէն վաղուց է փակուած։

Մենք մեր բողոքը ներկայացնում ենք ռուս հասարակութեան և խնդրում ենք արդարադատութեամբ քննել հայկական հարցը։

Մենք պնդում ենք, որ դաւադրութեան և կայսրութիւնից անջատման մասին տարածած բոլոր լուրերը պարապ ուղեղի անբարեխիղճ արդիւնք են։ Հայերը երբէք ռուսաց կուլտուրայի դէմ չեն եղել։ Ներկայ տարուայ „Русскія Вѣдомости“ լրագրում տպուած իւր երկու գեղեցիկ ֆելիէտոններում Իւրիյ Վեսելովսկին ապացուցեց թէ մինչև որ ատիճան մենք կարդում ենք և սիրում ռուս բանաստեղծներին, գրողներին, հրապարակախօսներին և գիտնականներին և թէ որպիսի անջնջելի ազդեցութիւն են գործել նրանք հայ մտքի և հայ գրականութեան վերայ։ Ռուսական կուլտուրան Տաճկաստան և Պարսկաստան տանող ու առաջնորդողներն մենք ենք։ Պարսկաստանի լեռ ընկած քաղաքներում անգամ ոչ միայն հայոց ուսումնարաններում սովորեցնում են ռուերէն, այլ և դնում են ռուսական պիեսաներ։

Բայց հէնց մայրական կաթի հետ ծծելով ռուսական կուլտուրան, կրթուելով նրա ազդեցութեան տակ, և տարածելով նրա բարեբեր սերմերը մինչև իսկ Ասիայի ամենայետ ընկած անկիւններում, մենք, մնալով մեր տէրութեան հաւատարիմ հպատակներ, հաստատապէս, անյողդողդ և անպայման ցանկանում ենք պահել մեր լեզուն, մեր հաւատը ու նոյնութեամբ, անձեռնմխելիօրէն յանձնել մեր սերնդին։ Բայց միթէ՞ սա դաւադրութիւն է։

Եթէ սա դաւադրութիւն չէ, եթէ մեր ցանկու-

թիւնները օրինական են, իրաւացի են, պէտքէ ամենից առաջ փոխել այն բացառիկ և սահմանափակող օրէնքները, հրամանները, շրջաբերականները, որոնց նպատակն է ջնջել հայոց լեզուն, թուլացնել հայ-լուսաւորչական անկախ—ինքնագլուխ եկեղեցին և փոքրացնել կաթուղիկոսի սրբազործուած կոչումը։

Կովկասեան ադմինիստրացիայի սխալները դեռ դժբաղդութեան կէսն են և չարիքը կատարեալ կլինի, անուղղելի կլինի, եթէ նա կյամառի իւր սխալների մէջ և չի ուղղել նրանց։ Անկասկած է, որ հայերին ռուսացնելու համար ձեռք առած բոլոր պոլիցիական խիստ միջոցները վերջացան կատարեալ անյաջող և տուին բացասական արդիւնք։ Նրանք վառեցին ազգայնական զգացմունքներ, առաջ բերին փոխադարձ ու վտանգաւոր օտարացումն և անպայման հեռացրին ամենազօր և ամենայաղթ կուլտուրայի շնորհիւ բոլոր Կովկասեան ազգերի հոգեկան նմանողականութեան (ассимиляція) ցանկալի վարկեանը ռուսների հետ, այն վարկեանը, որի համար ազնուութեամբ աշխատել էին այնքան ռուս հանճարներ և տաղանդներ գրականութեան, արուեստի և գեղարուեստի ասպարիզում։

Որպէսզի հայերի մէջ խաղաղութիւն վերականգնել, անհրաժեշտ է վերցնել այն սահմանափակող բոլոր օրէնքները, որոնց հետ հայերը երբէք չեն հաշտուիլ։ Հակառակ դէպքում խաղաղութիւնը կլինի միայն առերեսն, կեղծ ու սուտ։

Դեռ բաւական չէ խաղաղութիւն մացնել, պէտք է նրան ամրացնել, հաստատել, մեզ հաւատ ներշնչելով, որ անցածը կանհետանայ ինչպէս վատ երազ,

վատ կօշմար և այլևս երբէք չի վերադառնալ։ Երբէք։

Դրա համար պէտք է բաց կերպով խոստովանել, որ Կովկասի բոլոր ազգերը, որոնց թւում և հայերը, ունեն մարդկային բոլոր նոյն իրաւունքները, ինչ որ ունեն ռուսներն և որ գլխաւորն է, պէտք է Կովկասում հիմնել իրաւական կանոններ, այն կանոնները, որոնցից Կովկասը զրկուած է և առանց որոնց երկիրը չէ կարող ծաղկել և բնակչութիւնը չէ կարող ապրել և անձնատուր լինել իւր զբաղմունքներին՝ համոզուած և ապահով, առանց վախենալու վաղուայ հոգսից։

Այդպիսով, հայկական հարցը, որ ունի իհարկէ իւր առանձնայատկութիւնները, որոնք պէտք է անյապաղ կերպով վճռել, կապ և կախումն ունի մի աւելի մեծ հարցից—ընդհանուր ռուսական հարցից։

Այս բանում մեզ համոզում է և այն աղերսագիրը, որը ներկայացրին հայերը Կովկասի փոխարքային և Մինիստրների խորհրդին։ Այդ աղերսագրի հետ ծանօթանալով ընթերցողը կհամոզուի, որ այժմ էլ, ընդհանուր յուզմունքների և շփոթութիւնների շրջանում, հայոց նպատակը դաւադրութիւն և անջատականութիւն չէ։ Աղերսագիրը պարունակում է քսան յօդուածներ և փոքրիկ վերջաբան։ (*)

Սրանք են հայերի ցանկութիւնը։ Արդեօք նրանք համակրութիւն կգտնեն կառավարութեան կողմից, այդ մենք կտեսնենք մօտիկ ապագայում։ Յիշենք միայն, որ Կովկասը գտնւում է կատարեալ անիշխանութեան նախօրեակում։ Ո՞վ չգիտէ, թէ ինչպէս վերջին տասնամեակում աւազակութիւնները և կողոպուտները շատացել, սարսափեցնող չափերի են հասել։ Եթէ առաջ կողոպտում էին մեծ ճանապարհների վերայ մութ գիշերով, այժմ յարձակւում են երկաթուղու գնացքների, կայարանների, մինչև անգամ պահականոցների վերայ, կողոպտում են օրը ցերեկով աղմկալի քաղաքների կենդրոնական փողոցներում։

Այդ երևոյթը կարող է բացադրուել նրանով, որ Կովկասի ադմինիստրացիայի ամբողջ եռանդը, բոլոր ժամանակը և միջոցները անպտուղ գործադրւում են մաքառելու համար երևակայեալ հայկական դաւադրութեան դէմ։ Եւ ոչ մի անգամ Կովկասի ադմինիստրացիան չմտածեց ընդ միշտ ապահովել երկիրը մութ աւազակային էլէմենտներից արմատական միջոցով—խաղաղ զարգացմամբ։ Բայց նա (ադմինիստրացիան) ամենակարճ ժամանակում կարողացաւ առաջացնել յուզմունք, վրդովմունք և դժգոհութիւն մինչև անգամ հայերի մէջ, տեղական այդ ամենախաղաղ տարրի մէջ։

Այժմ այդ բոլորին միանում են և բոլոր ճիւղերի բանուորների գործադուլները և լուրջ ագրարական շարժումները, որոնք արդէն ամբողջ գաւառներ են բռնել։

Կարծես մի խիստ փոթորիկ է բարձրացել։ բայց փոթորիկը կանցնի։ Լուսամիտ գրաֆ Վարանցով-Դաշկովի փոխարքայ նշանակուելը գրաւական է հեռուից փայլող նոր կեանքի արշալուսին։

(*) Ռուսերէնում տպուած այդ աղերսագիրը մենք չթարգմանեցինք, որովհետև մամուլի մէջ ամբողջովին տպուեց. Մշակ №№ 109,—110. ծանօթ. թարգ.

Ուզում ենք հաւատալ, որ կբացուի վերջապէս անհամբեր սպասուած պայծառ առաւօտը. նա կցրուի այն մռայլ խաւարը, որի մէջ տասնեակ տարիներից ի վեր խեղդւում ենք։ Ուզում ենք հաւատալ, որ Կովկասի բոլոր ազգութիւնները ձեռք ձեռքի տուած իրենց անդրանիկ եղբայր ռուսների հետ սիրով, համաձայնութեամբ, միատեղ և հաստատաքայլ կգնան աշխատութեան, կուլտուրայի և ազատութեան ցանկալի ճանապարհով։

Եւ այն ժամանակ Կովկասը, ռուսական թագի այդ ամենալաւ ադամանդը, որի փայլը աղօտացել էր նրա վերայ նստած փոշուց, նորից կպսպղայ իւր սքանչելի փայլով։

ՎԵՐՋ.

Գինն է՝ Ռուսաց 10 կոպ.
Պարսից 12 շահի

Հայաստանի Ազգային գրադարան
NL0431758

1398.